

6(699)

2024

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիրքար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՐԱՐԱՐ


Лусарар

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ԱՐՇԱԿ ԶՈՂԱՆՅԱՆ

ՕՐՈՐ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ



Դու՛ն նստեր ես ճամփաներուն անկյունը,
Մագերդ ի վար իջեր կախվեր է ձյունը,
Մարմնույդ վրա կփոսանան մութ խոցեր,
Եվ աչվըներդ արյունի լիճ են դարձել:

Ո՞ր չար պարիկը հյուսեց թելը բախտիդ...
Ո՞վ տեսնելով քեզ տապալված ու վտիտ՝
Պիտի հիշե, որ դու՛ն երբեմնը հզոր
Աղջիկն էիր սև աչքերով լուսավոր:

Կծփային մագերդ ինչպես դրոշ մը լայն՝
Ազատ լեռան մեջ ուր հոգիդ մեծածայն
Կմոռնչեր խոյանալով սարե սար,
Ու ծոցդ հպարտ՝ մեղր ու կաթով կուռնեմար:

Քեզ ցանկացին հելուզակները բոլոր.
Պաշարեցին քեզ ոսոխներ ահավոր.

Երկար ատեն ոգորեցար, կռվեցար,
Մինչև ալ խոնջ ինկար գետին ուժասպար:

Եվ քու հոգիդ արգավանդ էր ու բարի՝
Կործանարար ուժերուն մեջ վիթխարի.
Դու՛ն կյանքի ծիլ մ'ավելցուցիր աշխարհին,
Մատներդ հողեն գեղեցկություն հանեցին:

Դու՛ն Անահիտն էիր խաղաղ աչքերով,
Ոսկիամայրն էիր պայծառ լանջքերով,
Ծոցեդ բարիք, նայվածքեդ լույս կտեղար,
Շրթներդ դաշն էին ու ձեռքդ ճարտար:

Եկան խուժերն ու ձեռքիդ կապ անցուցին,
Բզբստեցին, աղարտեցին ծոցդ անգին.
Եվ բյուրախոց դարձար դու՛ն Մայրը կարմիր՝
Գողգոթային ճամփուն վրա ծնրադիր:

Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ քաջ եղար ցավին մեջ...
Աղետքին տակ հոգիտ մնացեր էր անշեջ.
Կարծր լուծեր կտորտեցիր ու մահեն
Քանի՜ անգամ ոտքի ելար դու՛ն նորեն:

Աչքդ լույսին կսևեռեր անդադար.
Միտքդ, խիզախ, նոր աշխարհին կդառնար.
Ու դարերով համառեցար, առանձին,
Թու՛մք ձևանալ ասիական հեղեղին:

Մեծցավ հեղեղն ու զգետնեց քեզ մուկեզին
Ու մարեց բոցդ թափով իր ալիքին.
Չվառական, խավարին մեջ, հողամած,
Միշտ կենդանի, դու՛ն սպասեցիր գալարված:

Գիշեր ատեն, մերթ հին շիրմաց խաչերը

Կերերային, ու Մասիսի քաջերը
Մութին մեջեն կշողային բարկաճայթ,
Աչվըներեն արծկելով շառ ճառազայթ,

Օդին մեջ խուլ կթնդային թմբուկներ,
Դու՛ն, դող ելած, կառնեիր պահ մ'աչքդ վեր,
Ու, վրդոված, կնայեիր լեռներուն,
Ոչի՛նչ՝ բայց մութը ծանր ու պաղ լռություն...

Օր մ'ալ ցավի ցնցման մը մեջ անսահման՝
Ցցվեցար մեծ ճիչով մ'անձկուտ ընդվզման,
Աշխարհ ծայրիդ խուլ մնաց ու բիրտ ուժին
Կույր գարշապարը ճգմեց ճիգդ քուկին:

Բարկ հուրերու մեջ ճիվաղներ ցատկեցին,
Սիրտդ այրեցին ու աչվըներդ փորեցին,
Տու՛նեդ վանված, հովերուն տակ մնացիր,
Մերկ տարածված - չորս դիդ արյուն ու մոխիր:

Հիմա նստեր ես, ցավագին ուրվական,
Ավերներուն պատկերին մեջ տխրական.
Կխածկրտե վերքերդ հովը սառուտ,
Արյուն կիյնա խեղճ ծիծերեդ կաս-կապուտ:

Դանդաղորեն կծաժես զլուխդ ու կուլաս,
Ու ցած անուշ ծայրով օրոր կկարդաս
Ձավկըներուդ, որ արյունին մեջ ինկան
Եվ անոնց, որ չորս հովերուն ցրվեցան:

Օրոր կանանջ արևներուն, լուսավետ
Աչվըներուն, որ մարեցան առաժվետ,
Եվ անոնց, որ դեռ կապրին ու կտանջվին
Ձնդաններուն մեջ ու մռայլ արսորին:

Հերիք, հերիք... այդ օրորդ ողբ է մահու.
Հերիք... մենք նոր օրոր ունինք երգելու,
Պիտի երգինք օրորն հույսին ու վրեժին,
Ու մեռելներն պիտի հողին տակ սարսին...

Հերիք, հերիք... վեր առ զլուխդ ու մի՛ լար,
Ցավը սուրբ է, ցավը՝ մեծ ու փրկարար.
Ոչինչ կա վեհ, քան խաչին տակ զոհն արի,
Գիշերին մեջ կիյուսվի այգը բարի:

Ժանտ դահիճներն ու քանդողները մթին
Փոշի պես պիտի անցնին ու ցնդին,
Ու մոխիրին մեջեն պիտի ելլես դու՛ն,
Տառապանքն նորոգված ու շողողուն:

Մի՛ լար, մի՛ թույլ մագերդ հովուն տարտղեր,
Մի՛ լար, մի՛ խեղճ զլուխդ վար կործաներ.
Ճանճցիր դու՛ն քեզ, ժողվե՛ ավյունդ ցիրցան,
Հերիք ուժերդ օտար տան այուն կանգնեցան:

Հանգի՛ստ դժգույն եղբայրներուն, որ ինկան,
Ելի՛ր, օրհնե՛ մեզ, տարածե մեր վրան
Թևերդ անհուն: Թող մեր արյունն ու հոգին
Քու արևուղ մատաղ ըլլան ու ցամքին:

Մութին մեջեն պիտի ցցվիս հաղթական,
Աչքերդ աստղեր պիտի դառնան ու ցոլան.
Վերքերդ վարդ պիտի ըլլան հոտավետ
Ու լույս պիտի թափի ճերմակ մագերդ:

Պիտի կանգնի ճամփաներուն բերանը,
Պիտի քանդես Բռնության սև խորանը.
Ոտքի՛ ելի՛ր, ցավերդ երկունքն են հսկա,
Ով Մա՛ր, աշխարհի մը ծոցիդ մեջ կխլըրտա

ԳԻՏԱԿԱՆ ՆՏԱՆՇՐՋԱՆՆԵՐԻՆՆԵՐԻՆ ԵՎ ԻՐ ԿԱՆՈՒՄԻՆ ԱՐՇԱԿ ԶՈՂԱՆՅԱՆԻՆ

Մեր բանաստեղծության մեջ
մեկամտորոշությունը, ողբը կտի-
րեն.

Թումանյանի գործը փթթում
մըն է հոգեկան լուսավոր ու արու-
առողջության.

անոր երգը ուժի, զվարթու-
թյան, հավատքի, լավատեսության
պոռթում մըն է,

պայծառ ու խրոխտ նույնիսկ
ցավի արտահայտության մեջ:
Արշակ Չոպանյան

Հովի. Թումանյանի թանգա-
րանը այլևս դարձել է ար-
ցախցիներիս համար մի հարա-
զատ միջավայր, հավաքատեղի,
որտեղ շփումներ են տեղի ունե-
նում ոչ միայն մեր գրական անց-
յալի մեծերի, այլև այսօր գրական
աշխարհին շատ հայտնի ու արժա-
նավոր մարդկանց հետ:

Թանգարանի տնօրենի ժամա-
նակավոր պաշտոնակատար Լու-
սինե Ղարախանյանն այս անգամ
էլ նախաձեռնել էր գիտական
նստաշրջան՝ նվիրված մեծանուն
գրող, բանասեր, թարգմանիչ,
գրաքննադատ, լրագրող, ազգա-
յին ու հասարակական գործիչ, ի
վերջո, ամենայն հայոց մշակույթի
դեսպան Արշակ Չոպանյանի
ծննդյան 152-ամյակին, որին հրա-
վիրված էին գրական աշխարհի
խոշոր դեմքեր Սամվել Մուրադյա-
նը (գրականագետ, բ.գ.դ., պրոֆե-
սոր, ՀՀ գիտության վաստակավոր
գործիչ), Ավարդ Ջիվանյանը

(բ.գ.դ., պրոֆեսոր, թարգմանիչ,
հեթաբագետ), Ավիկ Իսահակյա-
նը (ՀՀ գրողների միության ան-
դամ, բ.գ.դ., պրոֆեսոր), Արտա-
վազ Ավագյանը (ԵրՊՀ, բ.գ.թ.,
դոցենտ), Աննա Ասատրյանը (ՀՀ
ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօ-
րեն, ա.գ.դ., պրոֆեսոր), Բեյրութի
«Օտղիկ» թերթի խմբագիր Յակոբ
Տիւնեայանը, Նոնա Դավթյանը

2. Հայ գեղարվեստական
երաժշտության քննադատությունը
19-րդ դարավերջին և 20-րդ դարի
սկզբին. դրանց ձևավորման և
զարգացման միտումների մասին:
Երկօրյա կոնֆերանսը հայտ-
նություն դարձավ իր համար,



(ԱրՊՀ դասախոս) և թումանյանա-
սեր հասարակայնության ներկա-
յացուցիչներ:

Հովի. Թումանյանի թանգարա-
նի տնօրենի Ժ/պ Լուսինե Ղարա-
խանյանի հավաստմամբ՝ այսօր-
վա միջոցառումը պայմանավոր-
ված էր ա/թ մայիսի 17-ին կայացած
միջազգային կոնֆերանսով, որ-
տեղ քննարկվել էին.

1. Արվեստի հարցերը Արշակ

հափշտակվեց Արշակ Չոպանյան
անհատի նվիրյալ գործունեու-
թյամբ (Լ.Ղարախանյանի խոստո-
վանությունն է) ու ձեռնարկեց այս
գիտական նստաշրջանը՝ մի նոր
կողմից ավելի խորը բացահայտե-
լու Արշակ Չոպանյան-Հովի. Թու-
մանյան առնչությունները: Ըստ
նրա՝ շատ ճիշտ գնահատական է
տվել Համաստեղը Արշակ Չոպան-
յանին. վերջինս գրաքննադատու-

թյանը հաղորդել է շատ բարձր
ճաշակ:

Առաջին բանախոսը՝ Վաչա-
գան Ավագյանը, ներկայացրեց, որ
քննադատ լինելուց զատ Չոպան-
յանը հանդես էր գալիս իբրև
սփյուռքահայ գրական կյանքի
կազմակերպիչներից մեկը և
ծրագրեր էր մշակում գրական
կյանքի կազմավորման ու զար-
գացման համար: «Մեր գրականու-
թյունը» աշխատանքում ընդգծում
էր այն ուղիները, որոնցով պետք է
ընթանար սփյուռքահայ գրական
կյանքը: Առաջին կարևոր խնդիրը
նա համարում էր «արևմտահայ
գրականության շանթահար շենքը
կանգուն ու կենդանի պահելու սր-
տառուչ ու նվիրական պարտակա-
նությունը»:

Ոչ պակաս կարևորություն էր
ստանում նաև սփյուռքահայ գրա-
կանության լեզվի խնդիրը: Շատե-
րը, այդ թվում և Կոստան Զարյա-
նը, առաջարկում էին գրել
արևելահայերեն՝ պատճառաբա-
նելով, որ հայ քաղաքական կյան-
քի կենտրոնը տեղափոխվել է
արևելյան Հայաստան: Սակայն
Չոպանյանը դեմ է կանգնում այս
մտայնությանը՝ բացատրելով, որ
նախ՝ արևմտահայերենը ու նրա-
նով ստեղծված գրականությունը
ազգային հարստություն են և
ապա՝ պետք է գուրգուրել թրքա-
հայերի բզկտված լեզուն և պահ-
պանել «Ալիշաններու», «Պեշիկ-
թաշլյաններու», «Թերգյաններու»,

«Ձոհրապներու», «Չրաքյաննե-
րու», «Վարուժաններու», «Սիա-
մանթոներու», «Ջարգարյաննե-
րու» գեղակերտած բարբառն ու
գրականությունը: Իսկ երկու լեզու-
ների միացման հնարավորությու-
նը նա թողնում էր բնական հան-
գամանքներին ու բնական ճանա-
պարհին:

Իր այս ծրագրերը սկսում է
պրոպագանդել 1929թ.-ից վերսկ-
սած «Անահիտ»-ի էջերում: Կոչ
անելով գաղթավայրերում շարու-
նակելու և զարգացնելու հայ մշա-
կույթը՝ Արշակ Չոպանյանը այդ-
տեղ է տեսնում մեր ցեղի կոչումը:

Նրա խմբագրած ազգային,
գրական-գեղարվեստական «Անա-
հիտ» հանդեսը բացառիկ դեր է ու-
նեցել հայ պատմամշակութային
կյանքի տարեգրության մեջ: 30
տարի շարունակ ասպարեզում լի-
նելով՝ այն անփոխարինելի դեր է
կատարել հայ մշակույթի, գրակա-
նության ու գեղարվեստի զարգաց-
ման գործում, մեծապես նպաստել
հայ և եվրոպական ժողովուրդների
գրական կապերի ամրապնդմանը,
Հայ դատի պաշտպանությանը,
արևմտահայ և արևելահայ, իսկ
հետագայում Սփյուռքի ու Խորի-
դային Հայաստանի հասարակա-
կան-մշակութային առնչություննե-
րի առաջընթացին ու զորացմանը
և հայ պարբերական մամուլի հա-
րուստ պատմության մեջ գրավել
իր կայուն ու առաջնա-
կարգ տեղը:

ԱՎԵՐԱՅՏԸ՝ ԱՆՆԱՎԱՏԱՆԻ

ՄԱՅՐ ԵՐԿՐՈՒՄ ԵՆՔ՝ ԱՐՑԱԽԸ ՄԵՐ ՆԵՐՍՈՒՄ, ՄԵՐ ՀՈԳՈՒՄ, ՄԵՐ ՄՐՏՈՒՄ



Արցախ տվեք մեզ, ոչ թե՛ սահմանամերձ բնակավայրեր... Մեզանից յուրաքանչյուրը աշխարհ է կորցրել, որ հայրենիք է կոչվում, տուն-տեղ է կորցրել, հարազատ օջախներ...

Սառեցրիք մեր դեմքի ժպիտները, սպանեցիք մեր հույսն ու հավատը, մեր կենսուրախ կյանքը հոշոտեցիք, խաթարեցիք մեր անցնելիք ճամփան, գցեցիք դեմտեղություն, ու հիմա ծայրամասային բնակավայրեր, նորից թշնամուն դեմառդեմ:

Վերադարձրե՞ք մեր հիմնավորող դրախտավայրը, մեզ վերադարձրե՞ք մեր ճաքբքած հողը, որ անձնագրի հայրդրիներն արյանք է ներծծված, մեզ վերադարձրե՞ք մեր տունուտեղը, մեր ոտնահետքերը վերադարձրե՞ք մեզ, մեր գերեզմանները, մեր հուշարձանները, մեր խաչքարերը, մեր եկեղծները նոսր վերադարձրե՞ք...

Մեզ վերադարձրե՞ք մեր Արցախը, մեր կորցրած կյանքի իմաստը նոսր վերադարձրե՞ք...

1

Այս ամիսներին, ինչ բռնատեղահանությունից հետո Երևանում են, նկատել են, որ աստղաբաշխական թվերի հասնող զներով պետությունը զբաղված է բարձրահարկ շենքեր կառուցելով և վաճառելով: Հանկամալի է, որ այն հասու կլինի ունևորներին: Այդ պատկերի հակադիր կողմում չքավորներ են, տվյալ դեպքում՝ արցախցիներ, որոնց մեկ շնչին տրվող 3, 4 թե 5 միլիոն դրամով առաջարկվում են անշարժ գույքի տեր դառնալ, այն էլ՝ հիմնականում սահմանամերձ բնակավայրերում:

Շատ սուղ թվով արցախցիներ աշխատանքի են տեղավորվել պետական համակարգում, այնքան քիչ, որով տեսանելի է դարձել անվստահությունը, ավելի ճիշտ՝ չկամությունը

մասնագետ արցախցիների հանդեպ, որ նրանց չտեսնեն պետական կառույցներում:

Արցախցիների մի սովոր հատված, գրկված մասնագիտությամբ աշխատելու հնարավորությունից, ստիպված է եղել տարբեր դասընթացների մասնակցել և այլ զբաղմունքների տեր դառնալ, այն էլ՝ հաճախորդներ ունենալու դեպքում:

Հայրենագուրկ արցախցիներին «մուրացկանություն» տանող ճանապարհը վտանգավոր է, որի ուրվականը վաղուց տեսանելի է մեր շուրջը:

Պետք է հիշել՝ այդ մենք չենք ինքնակամ լքել հայրենիքը, մեր տունուտեղը, երբ մեր կյանքը փրկելու գնով ենք հասել մայր երկիր: Այդ մենք չենք Արցախը ճանաչել Ադրբեջանի մաս և կորստյան մատնել մեր երկիրը... Բայց մենք սպասում ենք, որ կգան ժամանակներ, երբ մարդն արժեք կդառնա՝ իր երկրի հանդեպ ունեցած բարձր սիրտ գնահատանքով, իր մասնագիտական գիտելիքներով, իր դրական արժանիքներով, մարդկային ազնվագույն որակներով...

Ես էլ հազարավորների մեջ սպասում եմ փոփոխության, երբ հայրենիք հանձնելը հաղթանակ չեն համարի և ոչ էլ՝ փրկություն, երբ հայրենասիրությունը վերացական երևույթ չեն ընկալի և ոչ էլ՝ հանուն ոչնչի զոհաբերություն...

Մեզ ոչնչացնելու համար երկի չորս պատերազմ էր պետք, դրսից՝ տարբեր երկրների զինամտք, ներսից՝ դավաճանություն...

Արցախյան պատերազմներով հազարավոր մատաղավաճ կյանքեր, հաշմված ու գերեզմարված հայրուհիներ...

Հանուն ոչնչի՞ էր, որոնցով անցանք մենք, ու սերունդներ, որ կորցրին խաղաղ ապրելու իրենց իրավունքը, ու երազանքներ, որ մնացին անկատար, ու բանակցություններ, որ աջբակապության մեջ մի բան էին թվում, որին երբեմն երկրից երկիր, քաղաքից քաղաք տանող պետական այրերին անգամ հույս չէր ներշնչում: Եվ ժողովուրդ, որ ամեն օր, ամեն ժամ երեք տասնյակ և ավելի տարիների ընթացքում խաղաղության էր սպասում: Եվ վերջում մի փոքրիկ Արցախ, որ կշռաբարի երկու մտարներից մեկի վրա դրվեց, և որքան թեթև էր այն աշխարհի շահամուղ տերությունների աչքին, ու արցախցիները, որ շատ քիչ էին աշխարհի միլիոնավոր ժողովուրդների կողքին...

Այսպես տառապանք որտեղի՞ց, որ բաժին հասավ այս փոքրաքանակ ժողովրդին, այսքան կակիծ ու ցավ ինչպե՞ս տեղավորվեցին մեր սրտերում, որ դեռ շարունակում ենք ապրել՝ երբեմն ցանկություն ունենալով նորից

սկսել այն սկզբից, որից արդեն հոգնել ենք, ուժասպառ եղել՝ հասկանալով, որ հայտնվել ենք շահերի բախման կիզակետում:

Հավիտենական չէ կյանքը, բայց այս անցողիկ կյանքում ժամանակ չունեցանք ապրելու աշխարհի շատ ժողովուրդների մեջ: Ընկանք հոգևոր թե նյութական արժեքների հետևից, և ի՞նչ շահեցի՞ք մենք ու մեր սերունդները...

Հանուն ոչնչի՞ էր, ու կրկնում է մի ներքին ծայր մեր ներսում: Եվ անպատասխան մնացած այս հարցից ծնվում է մի նոր հարց, թե որտեղ մնացին մեր միլիոններից չա՛տ-չատերի գերեզմանները, մեր մշակութային հիմնավորող հուշարձանները, մեր դարերի պատմություն ունեցող եկեղեցիները... Այնինչ հոշոտվում են, պղծվում անօրենների կողմից՝ հայկական հետքերը վերացնելու համար:

Արցախը մեր ներսում է, մեր հոգում, մեր սրտում, արցախցին կարոտախտ ունի, որ երբևէ չի սպանվի, քանի հեռու է իր տունուտեղից, իր հայրենիքից, որ բռնագավթված է...

Չեմ ուզում մի նոր «Արցախ» լինի, բայց այն նորից կրկնվում է մայր երկրում:

Թշնամին նախատեսել էր Արցախը վերցնել 24 ժամում, երբ անցած տարվա սեպտեմբերի 19-ի կեսօրին պատերազմ էր սանձագերծել, և այն վերցրեց 24 ժամից 17 րոպե առաջ՝ հաջող օրը՝ սեպտեմբերի 20-ի կեսօրին:

Արցախցիներիս ծանոթ կեղտոտ ձեռագիր, երբ «հարևան» երկրի բռնապետը Արցախից հետո իր կեղտոտ ճանկերը խորում է մարդկանց սրտերը՝ ցանկանալով տեղի դառնալ նրանց՝ տարիներով կառուցած տունուտեղին, ծննդավայրին...

Տավուշից հետո Սյունիք, Գեղարքունիք... Ցավոք, այն շարունակական ընթացք ունի, երբ հայրենի տան դարպասները բաց են:

2 Չեմ հիշում պատմության մեջ մեծ ճիշտ, երբ հողի աշխատավորն աղաչի երկրի իշխանավորին, որ հայրենիքը չհանձնի: Չեմ լսել երբևէ, որ հանուն պետության՝ հայրենի գյուղեր պիտի հանձնեն, հայրենի ճանապարհներ... Չեմ հիշում մեծ արարք, որ հայ գինավորակները տարածք կանանգեցրեն, որ թշնամին ապահով ներս մտնի... Չեմ էլ ուզում հավատալ, որ գյուղացիներին ասել են, թե դիմադրելու դեպքում պատերազմ է լինելու, և պատերազմի բեռը մնալու է նրանց վրա:

Սա՛ է Հայաստանի ապագան, որ 150 հազար արցախցիներ, հայրենագուրկ դարձած, հասնեն մայր երկիր, այստեղից էլ՝ անդին:

Սա՛ է հայոց երկրի ապագան, որ արցախցիների մեծ ռեզերվու ընկնի հայր՝ իր տունուտեղը թողնելով թշնամուն... Բայց այդքանով չի ավարտվում, դեռ քանի-քանիսն են արտասվելու, քանիսն են ըմբոստանալու, դեռ քանիսն են անտեղի կալանավորվելու, քանի-քանի գյուղեր, դիրքեր, բարձունքներ, ճանապարհներ են հանձնվելու շարունակաբար ու հայրենից լցնեն հազարավոր «փախստական» աղբբեջանցիներով:

Թշնամին «Արևելյան Ադրբեջան» է ուզում՝ ամբողջ Հայաստանը՝ իր մայրաքաղաքով:

Վերջապես քաղցր միրիհից պիտի՞ արթնանա հայ ժողովուրդը:

Երկրի կյանքով ապրել՝ չի նշանակում քաղաքականության մեջ մտնել: Հաճախ են լսում անտարբերների բար կեցվածքը, թե իրենք քաղաքական գործերի մեջ չեն մտնում: Ցանկալի է հարցնել նրանց, երբ հողը ոտքերից տակից ուզում են քաշել, տունուտեղը ձեռքից վերցնել, քեզ աշխատանքից զրկել, մի՞թե քաղաքականության մեջ ես մտնում, երբ ազատ խոսքով ըմբոստանում ես քո իրավունքները ոտնահարողների դեմ:

Արդյո՞ք քաղաքականության մեջ ես մտնում, երբ ազդարարում ես այն սարսափելի արտույտ մասին, թե հայրենիքը կորցնելու վտանգի առջև ես...

Մի՞թե քաղաքականության մեջ է մտնում նա, ով դժգոհում է չար հարևանից, թե իր այգին է մտել, կտրել իր այգու բերքատու ծառը:

Մի՞թե քաղաքագետ դարձանք, երբ շրջափակված մեջ դժգոհեցինք, թե ինչու և ում մեղքով ենք կանգնել հումանիտար ու էներգետիկ ճգնաժամի առջև: Այն ո՞վ է, որ կլնի, երբ իմանում, որ միայն իր տուն մտնող էլեկտրական լարը կտրել են, կամ գազատար խողովակը՝ փակել:

Ինչո՞ւ, երբ երկիր ենք կորցնում, ոմանք լուռ են, բայց սեփական տունը, այգին, բակը, աշխատանքը կորցնելու դեպքում մոռանում են, որ իրենց աղմուկ-աղաղակով, հարայ-հրոցով, հայիռյալներով, բռունցքներով, օրենքի դեմքը ծեծելով «քաղաքականության մեջ են մտնում»՝ չհասկանալով, որ հայրենիքն այն տունն է, որտեղ ապրում են, այն այգին, որի բերքով սնվում են, այն աշխատանքը, որով ապրեցնում են երկիրը...

Այդպես էր Արցախում, այդպես է Հայաստանում:

Անտարբերության ու տգիտության չարիքը սպանում է մեզ, երբ երկրի կյանքով ապրողներն փորձում են թիրախավորել, թե քաղաքական կյանքի մեջ են մերթաշված: Երանի՜ թե ամեն ոք երկիր կորցնելու ծանր օրերին իրենց բաժին «քաղաքականությանը» զբաղվեին՝ հանուն ընդ-

հանրական գաղափարի, հանուն հայրենիքի, հանուն խաղաղության, հանուն սերունդների ապահով կյանքի... Մնում է ասել չարամիտներին՝ լռե՛ք ու մի՛ խանգարե՛ք:

Ի՞նչ անել, երբ երեխադ առանց ջեռուցման մրսի, սոված լինի, մնա առանց լույս, մթության մեջ:

Եթե զգազատար դեպի Հայաստան թշնամին անջատի, զոնե այն ժամանակ կհասկանա՞մ մարդիկ, որ մեզ դեպքում չեն տարբերակվում մեծերն ու փոքրերը, ունևորներն ու չունևորները, պաշտոնավորներն ու աշխատավորները...

Արցախից հետո այս անգամ ցուրտ ու մութ օրերը կայցելեն մայր երկիր:

Արցախը օրը սևացավ, երբ Արցախ մտնող զազատարի փակարձ հայտնվեց ազերիների ձեռքին: Ու շարունակվեց՝ զազից հետո լույսը, ապա՝ ճանապարհները... Սեկուսացանք, նաև՝ սովածացանք, առանց լույս մնացինք, առանց ջերմության, առանց սնունդ մնացինք, առանց դեղորայքի, վերջում մնացինք առանց հացի: Առանց աղ մնալու էլ անհնար էր, բայց ոմանք հեռու գտան «բարից աղ քամել»: Եվ որքա՞ն երեխաներ ամիսներով քաղցր թեյի կարոտ մնացին...

Ոստիկանի երեխան էլ սովածանալու է, այն ոստիկանի, որն ընդդիմանում է ժողովրդի ցասմանը: Սովը չի տարբերելու պատգամավորի երեխային, իշխանականների ընտանիքներն են մտնելու մույս մութ ու ցուրտ օրերը...

Գրպանում գունար ունենալով՝ խանութ կմտնեն բոլորը, ու դատարկ դարակները կողջունեն նրանց:

Արցախի շատ ու շատ երեխաներ այլևս հոր կամ մոր բացակայությունից չէին լացում, այլ սովից տնքում էին, երբ ժամերով հացի հեթ կանգնած ծնողները դատարկածեռն էին տուն մտնում: Եվ նրանք չէին համարձակվում երեխաների աչքերին նայել ու «սևերես» էին մնում իրենց սոված, ցրտից կուչ եկած երեխաների մոտ:

Մեծության տագնապից է սկսվում ամեն ինչ: Բռնի տեղահանություն, հայաթափություն, մարդկային նորանոր կորուստներ, երբ բարձունքները թշնամու ձեռքին են լինում... Այդպես են հայրենիք կորցնում, ինչպես Արցախը կորցրինք՝ մենակ մնալով ներսի ու դրսի թշնամիների հյուսած դաժան սարդոստայնում:

Հիմա ի՞նչ անել, երբ արցախցիների կյանքը խաթարված է, երազանքները՝ խորտակված: Հույսից կառչած՝ ապրել ենք ուզում, բայց չգիտենք՝ ինչպես, երբ Մայր հայրենիքում ենք՝ հայրենի Արցախը մեր սրտում:

Նապաշա ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՈԿՐԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ - ԱՐՁԱԿ ԶՊՊԱՆՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3 Թունամյանի գրական նորարարությունը, ինչպես ճշմարտացիորեն գտնում է Չոպանյանը, ավելի որոշ է հատկապես մեր բանաստեղծության մեջ լիրո-էպիկական ժանրի հաստատումով. «Մեր հին ու նոր հմուտ բանաստեղծութան մեջ քնարական տարրը չափազանց տիրապետող է. սակառային են հոն էջեր, ուր գործողություն գոյութիւն ունենա... Թունամյան մտցուց գործողութիւնը մեր բանաստեղծութան մեջ, զարգացրեց վիպերգին կարևոր կենսաբույս ճիւղը, և անոր մեջ տուա գլուխգործոցներ...»: Չոպանյանը շատ բարձր է գնահատում նաև Թունամյանի լավատեսա-

կան ոգին՝ գտնելով, որ մեր ժամանակակից մեկամաղձոտ բանաստեղծության մեջ նա բերեց «հոգեկան լուսաւոր ու արու առողջութեան մեջ», - մտադրություն: «Անոր (Թունամյանի-Վ. Ա.) երգը ուժի, զուարթութեան, հաւատքի, լատեստութեան պոռթկում մըն է, պայծառ ու խրոխտ՝ մոյ-միսկ ցաւի արտայայտութեան մեջ», - եզրակացնում է գրականագետը՝ բանաստեղծի քնարերգության մեջ հայտնաբերելով մեր ժողովրդի հոգևոր խառնվածքի համար այնքան խորհրդանշական դարձած կենսասիրության ցուցանիշ, որը բոլոր ժամանակներում իր դրսևորումն է ստացել մեր բանաստեղծության մեծերի


ներշնչանքի մեջ: Այսպես, առանց հատուկ զուգահեռներ անցկացնելու Չոպանյանը հայտնաբերում է Թունամյանի Նարեկացու, Քուչակի, Արովյանի ստեղծագործության հետ կապող ընդհանուր հատկանիշը, որը հետագայում ուրիշների կողմից պետք է ստանար կոնկրետ բովանդակություն և ընդգրկվեր բանաստեղծի գեղարվեստական և ազգային նշանակության ընդհանուր բնութագրի մեջ՝ դառնալով թունամյանագիտության զինանոցի մի կարևոր բաղադրիչը: Հողվածում թեև ակնհայտ է զգացական տարրը, և հաճախ Չոպանյանի խոսքը Թունամյանի նկատմամբ ստանում է քնարական երանգներ,

սակայն քննադատը իրեն հատուկ խորաթափանցությամբ գրողի ստեղծագործության վերաբերյալ անուն է կարևոր և արժեքավոր ընդհանրացումներ, տալիս սեղմ ու դիպուկ գնահատականներ, որոնք, ճիշտ է, այսօր կարող են թվալ ինքնին հասկանալի մի բան՝ բոլորի կողմից ընդունված, համընդհանուր ճանաչում առած, սակայն չնոռանանք, որ Չոպանյանը այդ ամենը ասել է շուրջ հարյուր տարի առաջ. «Այդ անզուգական վիպերգում,- գրում է Չոպանյանը,- հայ մակերեսներն հրճուհիներ կազմող այդ համեղ առակախոսն ու զրուցագիրը, այդ կորովի դիցագներգակը գմայլելի քնարերգակ մըն էր նաև. ան երգած

է՛ հակիրճ, ազնիւ ու նուրբ շեշտերով՝ սիրոյ հեշտանքն ու տանջանքը, մահուան խորհուրդը, կեանքի գեղեցկութիւնն ու ցաւերը, բնութեան (մասնաւորապէս հայրենի բնութեան) թովչութիւնները, ու երգած է մանաւանդ Հայ ազգի դարաւոր եղերական ու հերոսական ձակատագիրը, ժամանակակից հայ պայքարն ու ողբերգութիւնը՝ շարք մը սքանչելի էջերու մեջ, որոնք հզօր խտացումներ, համադրութիւններ են...»: Եվ վերջապես Չոպանյանը Թունամյանին ներկայացնում է որպես մարդ ու ազգային-հասարակական գործիչ՝ առանձնակի ուժով շեշտելով թե՛ առաջինը և թե՛ երկրորդը նրա մեջ.

ԱՅՍՈՐԵԱԿԱՆ

Ա. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ «ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ» ՎԻՊԱԿԻ ՆՈՐՈՐՅԱ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ



Դարերից եկած հզոր բանաձև է, որին նորոգյա հայացքով պետք է նայել: «Եթե հարձակվել չես սիրում, ուրեմն պիտի պաշտպանվես: Բայց որ լավ ես պաշտպանվում, վախենում եմ, էլ չեն գալիս»: Այսօրեական է խոսքը, արդյո՞ք պետք է մոռանալ մեր Սուրբ Լեռը: «Արարիչների ատյան» Արարատ: Աստվածները Սուրբ Լեռան գլխին են անում իրենց դատը: Ասույթը դեռ որտեղից ու երբևէ չի գալիս, որ գաղտնիք էր. «Երկաթը տաք-տաք են ծեծում»: Ու անհայտ մետաղը՝ գանձ-երկաթը հայտնություն է դառնում:

Մեծածից «աստվածները ծածուկում էին»: Եվ ի՞նչ էին պատգամում աստվածները: «Գնացե՛ք-լցրե՛ք աշխարհը, ի՞նչ եք նստել աշտարակի փլվածքների մեջ»:

Հեղեղներ սկսվեցին, «Բելը, տաճարով ու սեփական արծաճով տարված, ոչինչ չարեց եփարատի պատնեշների ամրացման համար»: Նա Մարդուկի արծաճը տեղափոխում է մեկ ուրիշ տաճար և իրեն սկսում աստծո տեղ դնել: «Նա սկսեց խաբել այն օրվանից, երբ փչեց իր փառքի շեփոը...»:

տի սուլոցից պիտի հասկանար, որ երկաթե սլաքը կտրել է նեռի պղնձե լանջապանակը, և Բելը շունչը փչել է:

Փառահեղ կովեցին բոլորն էլ, երբ Հայկի գերդաստանում պառակտում չկար, այնտեղ կուսակցություններ չկային, բոլորի պայքարը անօրեն թշնամու դեմ միաձուլ էր՝ համուճ մեկ զաղափարի...

Հետո Հայկը պատվիրեց, որ Հյուսիսի բարձրաբերձ լեռները եղբոր՝ Կովկասի անուճով կոչեն: Հաղթական ճակատամարտի վայրում կառուցեցին մի նոր դաստակերտ, անունը դրեցին Հայք, այսինքն՝ Հայկյաններ: Հայկի անունը դարձավ նրա ազգանունի անունը՝ հայ, երկիրը՝ Հայաստան, իսկ Հայկի որդիներն ու թոռները սկսեցին ընդարձակել հայրենի աշխարհի սահմանները:

Մեր շատ սիրելի Արմենուհի Դեմիրճյանի այս գիրքն ինձ համար հայտնություն է, նոր օրերին համահունչ, ուղերձները՝ շատ, ամեն մեկը՝ մի-մի դաս, որն ընկալելու և ընդունելու ժամանակները դեռ կգան...

«Հայկ Նահապետ» վիպակի վերլուծությունն ինձ տարավ նոր մտածումների, երբ արցախցիներիս «Հարանց տուն» վերադառնալը շատ ավելի դժվար է, քան Հայկի համար էր: Նրա գերդաստանը՝ 300-հոգանոց, համերաշխության, միասնականության, սիրո վառ օրինակ էր, Մեծի, տվյալ դեպքում՝ Հայկի խոսքը՝ օրենք, երբ միտված էր Հարանց տունը պաշտպանելուն, թշնամու հրոսակների ոչնչացնելուն, երկրի սահմաններն ընդարձակելուն, ազատության մեջ ապրելուն... Իսկ դրա համար պետք է զենք ունենային, և երկաթը դարձավ նրանց համար հայտնություն, որ զենք արտադրեն, տնտեսություն զարգացնեն ու միշտ պաշտպանված լինեն թշնամիներից:

Մենք 21-րդ դարում առնչվեցինք հակառակ իրավիճակին, երբ ներսից ու դրսից մեզ օղակի մեջ առնելով, շրջափակման մեջ ինձամայա հուճկահարս ու էներգետիկ աղետների մատնելով, ապա հյուճկված, սոված Արցախի դեմ 24-ժամյա պատերազմով ու պարտադրված բռնադատության մեջ, որ չզեղասպանվեց, ստիպված եղանք դուրս գալ հայրենիքից՝ կորցնելով Արցախը:

Եվ ինչո՞ւ: Քանի որ 2022-ի հոկ-



Ուղերձները շատ են, երբ ես-ի գիտակցումը վեր է բարձրանում, փառքի ձգտումը դառնում է կրոնամարտ:

Հայկը որոշեց իր գերդաստանով թողնել Բաբելոնը, չնայած իրենց ցեղը «չորս սերնդի քրտինք է թափել այդ քաղաքում»: Հարանց տուն տեղափոխվելը դարձավ նպատակ, երբ գիտեր, որ այդտեղ տուն են կորցնում, ունեցվածք, այնտեղ հայրենիք են գտնելու:

Հայկի 300-հոգանոց գերդաստանը թողնում է Բաբելոնը, ճանապարհվում Հարանց տուն, դեպի ազատություն...

Գեղարվեստորեն հագեցած է Արմենուհի Դեմիրճյանի վիպակը, այն ընթերցողին բազմաթիվ ուղերձներով տանում է դեպի բանալի բառը, դեպի գանձ-երկաթը, որով զենք են կռում:

Հայկին տնտեսության գործերի կողքին առավել շատ ոգևորում էր դարբինների աշխատանքը: Նրանք սկսում են գիշեր-ցերեկ երկաթ կոփել: Երբ զենքի պաշարը լրացավ, հերթը հասավ գորավարժություններին:

Եվ հետո Հայկը երեքթևյան նե-

Բաբելոնի աշտարակը կառուցվում էր: Մարդկանց աչքերը փայլում էին. «Շուտ հասնենք աստվածներին, շուտ լսենք դիցերի երանելի ձայնը» և որքան հարցեր ունեին՝ նրանց տալու:

Արդյո՞ք աստվածներին ընդունելի է իրենց հասնելու մարդկային ձգտումը, նրանց դեպի վեր մղվելը: Արդեն ներքին հակասություններ են ծնվում Բելի ու Հայկի միջև: Մարդուկը գերազույն Աստվածն է, որի արծաճը պետք է կառուցվեր:

«Տեղեկություն կա, որ Բել-Մարդուկի անդրին ունեցել է ճմ բարձրություն և զարդարված է եղել թանկարժեք քարերով»:

Մենք տեսնում ենք, որ այն Բելի դեմքով է սարքվում, աշտարակի արտաքին պատերը քարով պիտի շինվեին, բայց Բելը, օգտվելով Հայկի բացակայությունից, աղյուսով է շարել տալիս: Եվ շուտով նա չի էլ թաքցնում, որ ինքն է Բաբելոնի տիրակալը: Բելի խարդալանքների մասին գուժում են Հայկին: Ինչո՞ւ են Բելի չսիրած մարդիկ սպանվում կամ աշտարակից սայթաքում: Աշտարակն էլ այլանդակել էին, տեսքը փոխված էր...

Հայկը համոզված էր, որ այն կփվի վարար անձրևներից, և նա չէր սխալվում: «Աշխարհում ոչ մի անձուռնի բան կանգուն չի մնում», «Բելին ասեք, որ անձրևները կբերեն աստվածների զայրույթի ձայնը»: Եվ աստվածները ոչ միայն անձրև ու քամի, այլև հողը ուղարկեցին:

Աշտարակը թեքվեց, սկսեց ճռճալ, քանդվել... Սկզբում վայրասուն բարձրացավ, մարդիկ չէին կարողանում փրկել աշտարակը, ամեն մեկն իր խոսվածքով ու բարբառով էր, միմյանց անհասկանալի, մահվան աչքերին նայելիս, ցրտի ու սովի մեջ: Արդեն մարդկանց համար Բաբելոնը սև քաղաք էր, իսկ տեղի ու-

Մի վաղ Կապուտիկյանի տուն-թանգարանի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու, բազմաթիվ գիտական հոդվածների, գրքերի և ֆիլմերի հեղինակ Արմենուհի Դեմիրճյանից վերջերս իր հրատարակած «Հայկ Նահապետ» վիպակը նվեր ստացա: Ինձ հետաքրքրեց այդ գիրքը նոր օրերի համադրության մեջ, որի նյութը բխում է նաև մանկավարժի իմ մասնագիտությունից:

Կարդացի մի շնչով, նոր հայացքով՝ հին ու նոր օրերի Հայաստանը հայացքիս առջև, երբ հազարամյակներ առաջվա «պատանական Հայաստանի տարածքը, որտեղից հայերը մեկնում էին կառուցման աշխատանքների, սփռվում էր դեպի Միջագետք»:

Ըստ Խորենացու՝ Հարանց տունը Նոյի որդիների երկիրն է, որտեղից մարդիկ գնում են մասնակցելու Բաբելոնյան աշտարակաշինությանը:

Իր գերդաստանով ու ցեղախմբով Հայկը մեզ երևում է քարե մուրճը ծեռքին՝ որպես տիտանական ուժի տեր, որպես շինարար: Նա հյուրընկալ է, կանխում է սովը, համախմբում աղքատության մեջ գտնվողներին, նրանց ընդգրկում շինարարական աշխատանքներում...

«Այս ի՞նչ հարագատ լեզու են լսում... Հարանց տնի՞ց եք եկել, մեր պապերի բարձրիկ երկրից»:

Հայկի խոսքը լեզվի, պապերի երկրի նկատմամբ սիրո, հպարտության, կարոտի զգացողություն է: Արարող, ստեղծող մարդը՝ որպես պետություն, տոհմի, գերդաստանի ղեկավար, պետք է նաև շինարար լինի, բայց ոչ միայն բառի բուն իմաստով:

Քարոտ երկրի օրենքը՝ «թիկունք թիկունքի, կպած են բարձրացնում պատերը, որ վտանգի պահին միասին պաշտպանվեն»:

ինչպես, օրինակ, 1923թ. հունիսի 9-ին՝ Սորբոնի մեծ ամֆիթատրոնում, 1939թ. հունվարին՝ Մարսելում, 1945թ. մայիսին՝ դարձյալ Փարիզում՝ Նուբարյան մատենադարանում և այլն: Համեմատաբար առատ տեղեկություններ կան Սորբոնում կազմակերպված գրական-գեղարվեստական երեկույթի վերաբերյալ, որը նախագահել է Ալ. Շիրվանզադեն: Հետաքրքիր է իմանալ, որ երեկույթի ընթացքում ճառել են նաև Շիրվանզադեն, Ավետիս Ահարոնյանն ու նրա որդին՝ Վարդգես Ահարոնյանը, Ջաբել Եսայանը և էլի ուրիշներ: Չոպանյանը, ինչպես կարողան ենք հարդրագրության մեջ, «իր սովորական պերճախոսութեամբ» հարգանքի ողջույնը բերելով Թումանյանի հիշատակին, խոսքում հատկապես ընդգծել է գրողի քնարերգության՝ մեր ժողովր-

«Մարդը Թումանյանի մեջ այնքան հրապուրիչ ու սիրելի էր, որքան գործը: Անիկա մեծ սիրտ մըն էր՝ իր ազգին բանաստեղծութեան եւ իր բարեկամներուն սիրով ամեն ինչ հզորապես բարբառող»:

Հողվածն ավարտվում է այն անմացորդ հավատով, որ Թումանյանի գործը հավերժորեն պիտի ուղեկցի սերունդներին՝ մշտապես վարակելով լավատեսությամբ, իսկ նրա շիրիմը պետք է ուխտատեղի դառնա՝ հոգեկան առողջություն ու գեղեցիկի ներշնչում պարզելով այցելողներին:

Հետագայում, ինչպես իմանում ենք մանուկ տեղեկություններից ու Չոպանյանի նամակներից, նա տարբեր առիթներով տարբեր քաղաքներում ու վայրերում բանախոսություններ է կարդացել Հոլմի. Թումանյանի ստեղծագործության վերաբերյալ,

տեմբերի 6-ին Պրահայում ՀՀ վարչապետի հայտարարությամբ Պարաբաղը ճանաչվել էր Ադրբեջանի մաս:

Հայկ Նահապետը, իր ժողովրդի կամքին հակառակ, երկիրը կհանձնե՞ր Բելին: Բայց Արցախը հանձնեցին ներսից: Հայկը հարևան երկրից չէր զենք հայթայթում կամ դաշնակից երկիր չէր փնտրում, երբ գիտեր, որ բազմաազգային զորքի դեմ է պատերազմելու, իսկ առաջաօր «մերումը» դաշնակից գտնելու թե ուրիշ երկրներից զենք գնելու փնտրություն մեջ են, երբ երկաթը մեր «տանն» է:

Արցախը կորցնելուց հետո վտանգված են մայր երկրի սահմանները, քանի որ Արցախը դարպաս էր Հայաստանի համար: Ինքն էլ մտահոգ եմ, շատ հետաքրքրված, թե ե՞րբ ենք մեզ թափ տալու, ե՞րբ ենք հասկանալու, որ հողի խնդիրը գերակա է հացի խնդրից, ե՞րբ ենք գիտակցելու, որ Հայկ Նահապետի, նրա գերդաստանի Հարանց տունը պաշտպանելու մտածողությունը, նրանց ոգին, համառ պայքարի նպատակաւազությունը պիտի ունենանք, ոչ թե Արցախից հետո, Հայաստանի սահմանամերձ տարածքները հանձնելով, խաղաղություն մուրանք, և այն դեպքում, երբ թշնամու հայացքը ամբողջ Հայաստանի վրա է՝ Երևանով հանդերձ. չէ՞ որ մեկ դար կյանք ունեցող անօրենների համար Հայաստանը Արևմտյան Ադրբեջան է:

Ու քանի դեռ օր օրի վառաբարացող իրավիճակում ենք հայտնվում, դեռ Արցախ վերադարձի մասին խոսելը վաղ է, պետք է մտածել մայր երկիրը փրկելու մասին: Իսկ այն պետք է սկսել ներսից՝ մեր հավաքական ուժով, համախմբվածությամբ, հայության միասնականությամբ, այնինչ Սփյուռքն են ուզում անջատել Հայաստանից, ինչպես Արցախը անջատեցին... Ոչ թե պատանական ու իրական Հայաստանը պետք է բաժանել, հայրենասիրությունն էլ վերացական երևույթ համարել, այլ հայրենիքի հանդեպ սերը, նրա պաշտպանությունը մեծից փոքրի համար պետք է գերակա դառնա, հասկանանք, որ հայրենիքը մեր տունն է, մեր բակը, մեր այգին, մեր ծառը, մեր թուփը... Այլապես գառնել-բաժանելով ո՞ւր ենք հասնելու...

Նապաշա ԳՐՈՒՄՅԱՆ

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՄՆԻ ՀԱՄԱՐ Է ՊԵՏՔ, ԻՍԿ ԱՐՎԵՍՏԸ` ՀՈԳՈՒ



Նկատել էք, որ այն մարդիկ, որոնք պարբերաբար զբաղվում են սպորտով, կարող են պարծենալ ոչ միայն ամուր առողջությամբ, այլև ուժեղ բնավորությամբ: Այդ ի՞նչ է անում սպորտը մեր օրգանիզմի հետ, որ մենք ձեռք ենք բերում բնավորության ուժեղ գծեր, դառնում ենք ավելի հավասարակշիռ, բարի ու համբերատար: Շատերը վստահ են, որ սպորտը մարդուն տալիս է միայն ֆիզիկական զարգացում, բայց դա թուրիմացություն է: Գոյություն ունեն սպորտի զանազան տեսակներ, որոնցից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ ազդեցությունն ունի բնավորության վրա:

Շատ մարդկանց մոտ սպորտը զուգորդվում է մրցաշարերում հաղթանակներ գրանցելու հետ: Այս պատկերացումը հետին պլան է մղում սիրողական սպորտը, առողջ ապրելակերպը, իրական ինքնապաշտպանությունը: Սպորտն ու մարտարվեստները միայն մրցաշարերը չեն եւ ոչ էլ մկաններն ու մարզական ձգվածությունը, դրանք կյանքի լավ ուսուցիչներ են յուրաքանչյուր պարապողի կյանքում: Ասվածի մեջ ավելի լավ համոզվելու համար հարցազրույց ունեցանք կարատեի մարզիչ՝ սենսեյ Արամ Գեորգյանի հետ, որը, պատմելով իր մարզածների մասին, կարելու էր թե մրցումներին մասնակցելն ու հաղթելը, այլ մարմնի ու ոգու առողջությունը, ներքին աշխարհի զարգացումը, կյանքի համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերումը:

Արամ Գեորգյանն Արցախի հայտնի մարզիչ է, որի շնորհիվ ավանդական կարատե-դո մարտարվեստն արմատավորվեց մեր հայրենիքում, զարգացավ ու մասսայականացավ: Նա պարապել սկսել է 29 տարեկանից: Պատմում է, որ երբ մոր էր սկսել պարապել, Երեւանում սեմինարների էր գնում հայտնի վարպետի մոտ: Դե տեսելով իր 55-ամյա ուսուցչին, որը շատ արագ ու թեթե էր կատարում կարատեի շարժումները, սկսնակ Արամ Գեորգյանը մտածում էր՝ արդ-

յո՞ք իրեն կհաջողվի հասնել այդ աստիճանին: Մարտարվեստում երկարամյա փորձ ունեցող մարզիչը՝ սեւ գուտի 4-րդ դաս վարպետը, հիմա արդեն հիմքեր ունի պարծենալու առողջության լավ վիճակով, մտքի եւ մարմնի ճկունությամբ, շարժումների արագությամբ: Տիրապետելով մարտարվեստի գաղափարներին եւ նրբություններին՝ երբեւէ չի օգ-

տագործել դրանք մրցաշարերում, բայց կիրառում է կյանքի փորձություններն անցնելիս՝ շրջանցելով հիվանդություններն ու այլ վտանգներ: Խոսելով մարտական արվեստի մասին՝ մարզիչն իմաստուն մեկնաբանություն տվեց, որ գիտությունը մարմնի համար է պետք, իսկ արվեստը՝ հոգու: Արվեստի բոլոր ձևերում, լինի նկարչություն, պար, քանդակագործություն, արտահայտվում է ստեղծագործ միտքը: Մարդն օժտված է ստեղծագործ մտքով, պարզապես պետք է ուշադրություն դարձնի Աստծո կողմից իրեն տրված տաղանդին, ճիշտ եւ նպատակային օգտագործի կենսական էներգիան: Երիտասարդ հասակում, հատկապես մինչեւ 40 տարեկանը մարդու մոտ ակտիվ է մկանային էներգիան, 40-50 տարեկանում ակտիվ է ներքին էներգիան, որը կարգավորել կարելի է ճիշտ շնչառության միջոցով, իսկ 50-ից բարձր տարիքում ակտիվացնում է մտավոր էներգիան, որը, սակայն, չի գործում վերոնշյալ թվարկվածների բացակայության կամ չմարզելու դեպքում: Մարզված մարդու գիտակցությունը տարբերվում է սովորական մարդու գիտակցությունից: Անկախ նրանից, մարզիչը մասնակցում է մրցաշարերի թե ոչ, պարապմունքների ընթացքում ստացած գիտելիքներն ու փորձը բավական են գիտակցելու, թե ինչ կարող է նրան սպասել փողոցում, հատկապես՝ փողոցային մարտում: Ուստի հազվադեպ կարող են հանդիպել մարզիկներ, որոնք վեճի կամ կռվի կբռնվեն: Իսկական մարզիչը պահանջ չունի իր ուժն ապացուցելու: Նա մաքուր է պահում հոգին ու մարմինը, կարողանում է հաղթահարել հույզերը:

Մարզիչը ըստ կարելիության դասակարգեց այն կետերը, որոնց ուշադրություն են դարձնում պարապմունքների ժամանակ: Առաջին տեղում առողջությունն է, այնուհետեւ՝ ճիշտ տեխնիկան ու ինքնապաշտպանությունը, հետո՝ մրցումները: Մարզիչը պետք է ճիշտ սննդակարգ ունենա, չճանապարհվի

մրցումների նախապատրաստությամբ: Մարզիչը կարող է չմասնակցել մրցաշարերի, բայց մարզիչն է հաղթանակի ուղին ցույց տվողը, առաջնորդը: Ինչպես նաեւ մարզիչն է այն խրատատուն, որը սամբոին չի պարտադրի դառնալ չեմպիոններ, բայց նրանց մեջ լավ մարդ կդաստիարակի:

Տեղին է հիշեցնել, որ Արամ Գեորգյանն իր որդուն դաստիարակել է հենց այդ սկզբունքներով: «Լուսարար»-ի սիրելի հյուր Տիգրան Գեորգյանն առանձնապես է բնավորության հատուկ գծերով, ինչը բնորոշ է մարտարվեստի իրական հետնորդներին, միաժամանակ «Լուսարար»-ում հաճախ են տեղ գտնում նրա՝ մրցաշարերին մասնակցելու եւ մրցանակային տեղեր զբաղեցնելու մասին պատմող նյութեր:

Արամ Գեորգյանը մարդու առողջության կարգավորման հարցում առանձնահատուկ կարեւորություն է տալիս սպորտին եւ ֆիզկուլտուրային՝ գերադասելով դրանք զանազան թանկարժեք դեղամիջոցներից: Բերում է օրինակներ, երբ մարտարվեստի սկզբունքներից բխող իր խորհուրդները կատարելով՝ դրական փոփոխություններ են նկատվել առողջական խնդիրներ ունեցող որոշ մարդկանց մոտ: Դա ճիշտ սննդակարգն ու ֆիզիկական ակտիվությունն են, հասարակ ֆիզիկական վարժությունները, որոնք ունեն նաեւ բուժիչ բնույթ: Ինչպես ինքն է նշում, եթե բոլորն ընտրեն առողջ ապրելակերպի այս միջոցը, ապա շուտով դեղատները կփակվեն: Փոխարենը անհրաժեշտ են ավելի շատ մարզադասիչներ եւ բանիմաց մարզիչներ: Ավելի զարգացած երկրներում, ինչպես օրինակ՝ Լեհաստանում, որտեղ զարգացած է սպորտը, իսկ մարդկանց առողջության մակարդակը բարձր է, ավելի շատ ու նպատակային մարզական ակումբներ են գործում, որտեղ մարդիկ մարզվում են առողջական լավ վիճակ պահպանելու համար: Մեծ ուշադրություն են դարձնում բազմաառարկ շենքերի առաջին եւ նկուղային հարկերը մարզասրահներ դարձնելու վրա, որոնք անվճար տրամադրվում են պարապողներին: Սենսեյը կոչ է անում բնակչությանը՝ ավելի շատ զբաղվել մարմնամարզությամբ, սպորտով եւ մարտարվեստներով, պահպանել ֆիզիկական ակտիվություն: Ինքը պատրաստ է աջակցել բոլոր դիմողներին: Պարտադիր չէ դառնալ չեմպիոն ռինգում, կարելու է լինել չեմպիոն որպես մարդ:

Այսպես թե այնպես, սպորտը եւ մարտարվեստները շարժում են, իսկ շարժումը կյանք է: Արժե վերանայել սեփական հայացքները, արմատախիլ անել վնասակար սովորությունները, ընտրել այնպիսի զբաղմունք, որը կնպաստի ոչ միայն ամուր եւ սլացիկ կեցվածք ունենալուն, այլեւ ամբողջությամբ կյանքի որակին:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՍԱՐ ՀԵՐՈՍՆԵՐ

ԱՆՊՐԱՆԻԿ ԱՐԱՋԱՆՅԱՆ. ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ՄԵՌՆԵԼ, ԲԱՆ ԹԵ ԴՈՒՐՍ ԳԱԼ ԱՐՉԱԽԻՉ

Կրթության, մշակույթի ու սպորտի ոլորտները լուսաբանելուց բացի «Լուսարար»-ը ստանձնել էր եւս մեկ առաքելություն. թերթի էջերում պարբերաբար զետեղվում էին Արցախյան բոլոր պատերազմների հերոսների սխրագործությունների, նրանց ապրած կյանքի ու գործունեության մասին պատմող հոդվածներ: Որքա՞ն ցանկալի կլինեք, որ այդ ոլորտում նոր էջեր չունենայինք, բայց խորը ցավով սկսում ենք արձանագրել վերջին՝ 2023թ. սեպտեմբերի 19-ի մեկօրյա պատերազմի նահատակների մասին տեղեկություններ, որոնց հավաքագրումը չափազանց դժվար է մեր պայմաններում, մինչդեռ որպես առաքելություն՝ արժանի:



Կան բարձր պատրաստվածություն եւ նախաձեռնություն, իսկ դժվար իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու ունակություն: Քաջաթաղի ուղղություններում դեկավարել է ԳԳ-ից ժամանած ակամանետային մարտկոցի գործողությունները, հմուտ եւ կազմակերպված գործողությունների, ճշգրիտ հաշվարկների արդյունքում հակառակորդի կենդանի ուժին եւ կրակային միջոցներին պատժաբերել է զգալի կորուստներ՝ կասեցնելով նրանց առաջխաղացումը:

«Լուսարար»-ը ներկալից հերոս, հրետանու սպա, մայոր Անդրանիկ Կիմի Աղաջանյանին, որի անցած մարտական ուղին փառավոր է ու հիշատակման արժանի: Ծնվելով խորհրդանշական ժամանակահատվածում, երբ Արցախը գոյության կռիվ էր տալիս, կարծես թե իր աշխարհ գալով հանձն առավ ծառայել ու պաշտպանել հայրենիքը: Չուկվեց, քանի որ գերադասում էր մահը. Արցախի անկումը տանել չէր կարողանում:

Ծնվել է 1992թ. օգոստոսի 31-ին: Սովորել է ավարտել է Ստեփանակերտի հ.9 միջնակարգ դպրոցը: 2013թ. ավարտել է ԳԳ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանը:

2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ զբաղեցրել է ՊԲ զորամասի 1-ին հզմ ակմ իրամանատարի պաշտոնը:

2020թ. սեպտեմբերի 27-ից Ույեմբերի 10-ը տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում զբաղեցրել է ՊԲ հրետանու բաժնի ՄՊԲ ավագ սպայի պաշտոնը եւ զոհվել է ՊԲ ԽՂԿ-ում, տարբեր գործողություններում աջակցություն է ցուցաբերել հրետանային ստորաբաժանումներին եւ անձամբ դեկավարել է հրետանու կրակը:

ՊԲ ԽՂԿ հրթիռակոծության ժամանակ գլխի շրջանում ստացել է վիրավորում եւ տեղափոխվել հիվանդանոց: 2023թ. սեպտեմբերի 24-ին արձանագրվել է հերոսի մահը:

Չայրենիքի համար մղվող մարտում հերոսի մահով ընկած մայր Անդրանիկ Կիմի Աղաջանյանի հուղարկվողությունը կազմակերպվել է Եռաբլուրում: Ամուսնացած չէր: Ցուցաբերել է մասնագիտա-

«Լուսարար»-ը ներկալից հերոս, հրետանու սպա, մայոր Անդրանիկ Կիմի Աղաջանյանին, որի անցած մարտական ուղին փառավոր է ու հիշատակման արժանի: Ծնվելով խորհրդանշական ժամանակահատվածում, երբ Արցախը գոյության կռիվ էր տալիս, կարծես թե իր աշխարհ գալով հանձն առավ ծառայել ու պաշտպանել հայրենիքը: Չուկվեց, քանի որ գերադասում էր մահը. Արցախի անկումը տանել չէր կարողանում:

Մարտկոցի կրակային դիրքը հակառակորդի կողմից ենթարկվել է ռմբակոծության եւ նաստացել է ծախ ձեռքի շրջանում բեկորային վիրավորում: Բուժումից հետո շարունակել է ծառայությունը նույն պաշտոնում: Չայրենիքի պաշտպանության ու անվտանգության ապահովման գործում ցուցաբերած խիզախության, արիության, անձնուրացության համար պարգևատրվել է ԱԳ նախագահի հրամանագրով «Արիության համար» մեդալով, «Անբասիր ծառայության 1-ին» աստիճանի, «Վազգեն Սարգսյան», «Անդրանիկ Օզանյան» զբրատեչական մեդալներով:

2023թ. սեպտեմբերի 19-ին տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում զբաղեցրել է ՊԲ հրետանու բաժնի ՄՊԲ ավագ սպայի պաշտոնը եւ զոհվել է ՊԲ ԽՂԿ-ում, տարբեր գործողություններում աջակցություն է ցուցաբերել հրետանային ստորաբաժանումներին եւ անձամբ դեկավարել է հրետանու կրակը:

ՊԲ ԽՂԿ հրթիռակոծության ժամանակ գլխի շրջանում ստացել է վիրավորում եւ տեղափոխվել հիվանդանոց: 2023թ. սեպտեմբերի 24-ին արձանագրվել է հերոսի մահը:

Չայրենիքի համար մղվող մարտում հերոսի մահով ընկած մայր Անդրանիկ Կիմի Աղաջանյանի հուղարկվողությունը կազմակերպվել է Եռաբլուրում: Ամուսնացած չէր: Ցուցաբերել է մասնագիտա-



ԱՆՍՈՒՑ ԴԵՄԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԱՐՎԵՍԻ ՆՎԻՐՅԱԼԸ



1924թ. մանկահասակ Պավլինեին նկատեց այդ նույն տարում Երևանում պարարվեստի անդրա-նիկ վարժարանը հիմնած՝ հայկա-կան ժողովրդական պարի մեծ գի-տակ Վահրամ Արիստակեսյանը:

Կրթական 1933թ. հունվարը, երբ Հայաստանի մայրաքաղաքում հանդիսավոր պայմաններում բաց-վեց Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերային թատրոնը, որի՝ այդ տարիներին դեռևս քաջամաս-կա պարախմբում իր հաստատուն տե-ղը գրավեց Բուռնազյանը. նա դար-ծավ օպերայի և բալետի թատրոնի մենապարուհին: Ընդամենը վեց տարի անց Մոսկվայում կայացած հայ արվեստի անդրադասարանում Պավլինեն աչքի ընկավ Արամ Խաչատրյանի «Երջանկո-թյուն» բալետում՝ բալետի հերո-սուհու դերապարի բուռնազյանա-կան հմայքով ու քնքշությամբ, հա-յեցի կատարումով: Ավելին՝ հիշա-տակված տասնօրյակի ընթացքում մոսկվացի երաժշտասերների հիա-ցական գնահատականին արժա-նացած՝ Թաթևուհի Ալեքսանյանի զլխ-վորած հայկական երգի-պարի հա-մույթի ծրագրում նա հանդես եկավ հայ ժողովրդի մեջ տարածված կա-նացի «Դաշտի պար» պարահամա-րով, որը հետագայում էլ մշտապես ընդունվում էր հանդիսատեսների աղմկալից ծափահարություն-ներով: Եվ էպիզոդիկ, և զլխավոր դերապարերով նա հանդես է եկել Բ. Ասաֆևի «Բախչիսարայի շատրվանը», Գլխերի «Պղնձե հեծյալը», Ա. Սպենդիարյանի «Նանդուկ», Ա Տեր-Ղևոնդյանի «Անահիտ» և մի շարք այլ բալետ-ներում:

Հայ արվեստի վերոնշյալ անդ-րանիկ տասնօրյակին Բաքվից հրավիրվել էր նաև երիտասարդ, բայց արդեն իսկ ճանաչված բալե-տի արտիստ, պարուսույց Գեորգի Գեորգիանցը, որը մինչ այդ եղել էր Աստրախանում: Տեսնելով Պավլի-նեին ու մոտիկից ծանոթանալով նրա հետ՝ իսկույն սիրահարվում և ամուսնության առաջարկություն է անում նրան: Սերն, անշուշտ, փո-

խաղարծ էր, և 1940 թվականին նրանք ամուսնանում են: Գեորգին այդպես էլ մնում և բալետի պարու-սույցի իր գործունեությունն է շա-րունակում Երևանում՝ Պավլինեի հետ կողք կողքի: Շուտով՝ 1941-ին, ծնվում է նրանց անդրադասար-նը՝ Գայանեն, իսկ 1947-ին՝ Ծովի-նարը: Երիտասարդ ամուսինները երբեք չեն կտրվել բեմական կյան-քից. դուստրերի խնամքով ու դաս-տիարակությամբ ավելի շատ զբաղվում էին տատիկ-պապիկնե-րը: Ծնողների մասին անթաքույց հպարտությամբ ու հուզմունքով է պատմում դուստրը՝ Ծովինար Գե-որգիանցը. «Հայրս ու մայրս մշ-տապես գործուղումների էին գնում: Նրանք եղել են հորհրդային Միու-թյան բազմաթիվ քաղաքներում, ինչպես նաև արտասահմանյան մի շարք երկրներում: Ես ու Գայանեն միշտ ըմբռնումով ենք մոտեցել ծնողներիս հաճախակի բացակա-յությանը տնից: Կարոտում էինք, բայց նաև հասկանում, որ դա իրենց ընտրածն է, որ իրենք ար-վեստի ու բեմի նվիրյալներ են: Իսկ արվեստը, ինչպես հայրս էր ասում, կիսատ-պաշտություն չի սիրում, նրան պետք է նվիրվես ամբողջ հո-գով ու սրտով: Մայրիկիս տաղան-ը բնածին էր, էն զլխից՝ տրված: Երբ փոքր էի՝ հայրս ուզում էր ինձ էլ պարուհի դարձնել: Տարան պա-րարվեստի քուլտը, բայց որոշ ժա-մանակ անց համոզվեցին, որ դա ինձ չէ... Ինքս էլ չէի ուզում դա ու հետագայում գնացի ռեժիսորու-թյուն սովորեցի»:

Հայկական ազգագրական պա-րերի հմուտ պարուսույց Պավլինե Բուռնազյանը 1957թ. աշնանը ան-վանի պարատեսող Ազատ Դարիբ-յանի հետ Երևանի պարարվեստի ուսումնարանի նորաստեղծ ժո-ղովրդական պարերի բաժանմուն-քի հիմնադիրներից մեկն էր: Նրա սաներն են եղել պետական հա-մույթների ճանաչված մենապարու-հիներ Աիդա Հարությունյանը, Սո-ֆի Դևոյանը, Սրբուհի Բաբայանը, Անահիտ Վեբեցյանը, Սոնյա Գա-պարյանը, Կարինե Նալբանդյանը: Չնոռանանք նշել, որ Բուռնազյանը հիշատակված ուսումնարանի ժողպարերի բաժանմունքի ուսում-նական ծրագրի հեղինակներից մեկն է:

1946թ. Պավլինե Արամի Բուռ-նազյանն արժանացել է Հայաստա-նի վաստակավոր արտիստի կոչ-ման: Դստեր՝ Ծովինարի խոսքով, հետագայում նա հրաժարվել է ժո-

ղովրդականի կոչումից՝ ասելով՝ քանի դեռ ամուսինը՝ Գեորգին, չի արժանացել դրան, ինքը չի ուզում ստանալ և ամուսնուց առաջ ընկ-նել:

1995թ. գարունը վերջինը եղավ նշանավոր պարուհու համար. մար-տի 19-ին նա հրաժեշտ տվեց երկ-րային կյանքին՝ գիսատողի պես մի անմար հետագիծ թողնելով երկրի վրա...

Որպես հավելում հողվածի՝ ասեն, որ հանգամանքների բերու-մով ինձ բախտ է վիճակվել մոտի-կից ծանոթանալ Պավլինե Բուռ-նազյանի դստեր՝ Ծովինար Գեոր-գիանցի ընտանիքին: Արցախից բռնազաղթելով՝ 2023թ. սեպտեմ-բերի 26-ից մինչև ս.թ. հունիսի 26-ը՝ ինձ ամիս շարունակ, իմ ընտա-նիքը հանգրվանել էր նրանց հյու-րընկալ հարկի տակ: Բաղրամյան պողոտայում մեզ տրամադրած 4-սենյականոց բնակարանի համար նրանք ոչ մի կոպեկ վարձ չեն վերց-րել: Ավելին ասեն. մեզ այդ նույն բնակարանը նրանք առանց վար-ծավճարի տրամադրել են նաև 2020 թվականի 44-օրյա պատե-րազմի օրերին՝ իմ ընտանիքի հա-մար չափազանց ծանր ժամանա-կան շրջանում (ոչ միայն պատերազ-մի պատճառով). ամուսինս ծանր հիվանդ էր, իսկ մենք բնակարան չէինք գտնում Երևանում հանգրվա-նելու: Եվ այդ ժամանակ էր, որ ծա-նոթացանք Առաքելյանների ընտա-նիքին (Ծովինար Գեորգիանցի ամուսինը՝ Դմիտրի Առաքելյանը, երկար տարիներ եղել է ՀՀ կոմպո-զիտորների և երաժշտագետների միության փոխնախագահը): 2023թ. սեպտեմբերի 19-ին, երբ սկսվեց պատերազմը, Առաքելյանների ըն-տանիքի անդամներն անհամա-տացած զանգուս էին մեզ, իմանա-լով հատկապես, որ թոռս ժամկե-տային զինծառայող է և գտնվում է առաջնագծում: Իսկ երբ իմացան բռնատեղահանման մասին՝ հորդո-րեցին առանց վարանելու գալ իրենց տունը:

Հիրավի, աշխարհն առանց բա-րի մարդկանց չէ: Անվանի պարու-հու՝ Պավլինե Բուռնազյանի հիշա-տակին գրված վերոնշյալ իմ այս հողվածը թող լինի նաև որպես երախտագիտության խոսք նրա դստեր ընտանիքի անդամներին՝ իրենց բարության ու մարդասիրու-թյան և այն ջերմ սիրո համար, որ ցուցաբերում են արցախցիներիս հանդեպ:

Լաուրա ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՎԵԼԻ ԼԱՎ Ե ՄԵՌՆԵԼ, ԲԱՆ ԹԵ ԴՈՒՐՍ ՉԱԼ ԱՐՉԱՆԻՑ

Եղբայրը՝ Արման Աղա-ջանյանը, նրա մասին մեծ պատկառանքով ու կորստի ծանր ցավով է խոսում. «Նա ինձ համար ոչ միայն ավագ եղբայր էր, այլև ծնող ու ընկեր: Փոքր հասակից սի-րել է զինվորական ծառայությունը, դպրոցում սովորելուց հետո ըն-դունվել է Ք. Իվանյանի անվան ռազմամարզական վարժարան, որտեղ սովորելուց հետո՝ ռազմա-կան համալսարան: Շարունակել է նվիրվածությամբ ծառայել հայրե-նիքին անգամ 44-օրյա պատերազ-մում վիրավորվելուց հետո: Բուժ-ման հետ կապված բարդություն-ներ կային, նրան առաջարկեցին հաշմանդամության կարգ ստանալ եւ այդպիսով դադարեցնել զինվո-րական ծառայությունը, բայց նա հրաժարվեց ու շարունակեց ծա-ռայել՝ չխնայելով առողջությունն ու կյանքը: Անդրանիկի կերպարը թե՛ որպես եղբայր, թե՛ որպես զին-վորական, թե՛ որպես անձնավորու-թյուն օրինակելի է ու պատմության մեջ հիշատակման արժանի: Ըն-կերներս հաճախ արտահայտվում էին, որ բարի նախանձով ինձ նա-խանձում են այդպիսի եղբայր ու-նենալու համար: Իսկ ես միայն հպարտ էի ու հպարտ եմ, որ նրա եղբայրն եմ»:

Հրետանու վարորդ Արթուր Մա-թետոսյանն ասում է. «2020թ. օգոս-տոսից ծառայություն շարունակել են իրետանու բաժնում՝ որպես իրետանու պետի տեղակալի վա-րորդ, ու ճանաչել են իրետանու սպա Անդրանիկ Աղաջանյանին: Նա հիացնում էր ոչ միայն իր բարձր մասնագիտական կարողու-թյուններով, գրագիտությամբ, այ-լև ընկերասիրությամբ ու բարու-թյամբ: Ինչպես մասնագիտական հմտություններն էր ակտիվ դրսևու-րում, այնպես էլ նվիրված ընկերու-թյուն էր անում: Սիրում էր ընկերա-կան հավաքությունները, ակտիվ էր կոլեկտիվում: Չձե մոռանում ընկե-րական հերթական հավաքությի ժամանակ նրա ասած ճակատագ-րական խոսքերը, որ ավելի լավ է մեռնի, քան թե դուրս գա Արցա-խից: Ասում են, թե խոսքը ուժ ունի: Գուցե եւ ճակատագիրն այդպես դասավորվեց, որ նա չտեսավ բռնատեղահանման, Արցախի հա-յաթափման ողբերգությունը, այլ զոհվեց հերոսի մահով՝ հայրենիքի ազատության համար մարտնչե-լով»:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԱՐՑԱՒԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆՆԵՐԸ

Երևանի Արվան 13 հասցեում գործող Իգիթյան գեղագիտական կենտրոնում եռուզեռ էր. հավաքվել էին Արցախի շնորհաշատ ու տա-ղանդավոր երեխաները՝ վայելելու ամիսներ տևած իրենց քրտնաջան աշխատանքի քաղցր պտուղները: Ներկա էին մասնակից երեխա-ները, նրանց ծնողները, արվեստի գեղահարաշ դռները նրանց առջև բացող մանկավարժ-վարպետնե-րը, հյուրեր, կենտրոնի աշխատող-ներ: Երեխաներին դասավանդող արցախցի 10 վարպետ-ուսուցիչ-ները նախ դասընթացների միջո-

ցով հնտություններ են ձեռք բերել ու կատարելագործվել, այնուհետև հավաքագրել Արցախից բռնի տե-ղահանված (2020 թ.-ից ու նրանից

հետ...) շնորհալի երեխաներին, նրանց հետ տքնել ու աշխատել և այսօր վայելում են իրենց աշխա-տանքի արդյունքը: Կենտրոնում

գործել են արվեստի 6 ճյուղեր, որոնցից յուրաքանչյուր մասնակից ցուցադրության է ներկայացրել գե-ղեցիկ մնուշներ:



Արցախի Հանրապետության ՄՊՍԿ տնօ-րեն Իրա Թամրազյանը ներկայաց-նում է իրենց անցած ճանապարհը: Ցուցահանդեսին նրանք ներկա-յացրել են արվեստի 4 ճյուղերով մնուշներ. ասեղնագործություն, գե-ղարվեստական տպագրություն, բատիկ, կավագործություն:

2020թ.-ից ի վեր նրանց գործու-նեությունը վերաբաղվել է Իգիթյան գեղագիտական կենտ-րոնում:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐՑԱՆ

ԱՅԱՅԻ ԵՐԿՐԻ ԿԱՐՈՏՈՎ

Ազատագրված ու անկախություն ձեռք բերած Արցախում շատ էր կարևորվում նաև մշակույթը: Ստեփանակերտում ու շրջաններում գործում էին տարբեր մշակութային խմբեր, որոնց մի մասը դեռ խորհրդային տարիներից էին հայտնի: Անկախության տարիներին ստեղծվեցին երգարվեստի ու պարարվեստի տարբեր համույթներ ու խմբեր: 2000 թվականին արցախյան մշակութային գործիչներ Ռոբերտ Ղազարյանի և Սլավա Ապրեսյանի նախաձեռնությամբ ու ջանքերով հիմնադրվեց երգի պարի, այսպես կոչված, «Տարեցներ»-ի համույթը, որտեղ հիմնականում երիտասարդության տարիքն անցած երգիչ-երգչուհիներ էին, երաժիշտներ: 2002թ. Արցախի կառավարության որոշմամբ մշակութային այս խումբը կոչվեց «Մենք ենք մեր սարերը» ազգագրական համույթ և սկսեց համալրվել երիտասարդներով: Տնօրենն ու գեղարվեստական ղեկավարն էր ԱՅ վաստակավոր արտիստ Տիգրան Մկրտչյանը: Որոշ ժամանակ անց համույթի տնօրենն է նշանակվում հիմնադիրներից Սլավա Ապրեսյանը, իսկ գեղարվեստական ղեկավարը՝ Գարի Ավանեսյանը: Այդ ընթացքում արդեն ստանում է պետական կարգավիճակ՝ «Մենք ենք մեր սարերը» երգի պարի պետական համույթ անվանումով: Տնօրենն էր ԱՅ մշակութային վաստակավոր գործիչ Ս. Ապրեսյանը, գեղարվեստական ղեկավար՝ ԱՅ վաստակավոր արտիստ Վիտալի Ղազարյանը: Արցախ աշխարհում տեղի ունեցող տոհմական ու այլ միջոցառումներում հատկապես կարևոր տեղ ունեցր այս համույթի էլույթը: Ստեղծման օրվանից «Մենք ենք մեր սարերը» հաճախ նաև զորամասերում էր ոգևորում հայ զինվորին, առանձնապես կարևորվում էին սահմանամերձ գորամասերը, բնակավայրերը: Բացի

ՀՀ տարբեր մարզերում, ԱՀ շրջաններում ու մայրաքաղաքներում համերգներով հանդես գալուց, համույթը, որի ստեղծագործական համերգային ծրագրում ընդգրկված էին ոչ

այժմ մեր սրբավայրերում, ավերված են մեր շենքերն ու հանգստարանները: Երկրի կարոտը սրտում՝ արցախցին ՀՀ տարբեր մարզերում ու Երևանում, արտերկրում հավատում

մանասկան, անհրաժեշտ տեխնիկայի, տարագների և այլ աջակցության խնդիր, որի հաղթահարումից հետո «Մենք ենք մեր սարերը» ՀՀ-ն կկարողանա իր տեղը գտնել, հանդես գալ արդեն իր միջոցներով: Կարևորը կան աջակիցներ, որն էլ հնարավորություն տվեց համույթին 2024 թվականին արդեն երկու համերգով հանդես գալ: Հունիսի 28-ին Երևանում՝ հուլիսի մշակույթի և սպորտի հանրապետական պալատի հանդիսությունների դահլիճում, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, OVIO ընկերության, «Հայաբվե» նախաձեռնությամբ, «Լույս» կրթամշակութային հիմնադրամի, «Արաբկիր» բժշկական կենտրոնի, «Տերյան» մշակութային կենտրոնի ու նրա տնօրեն Լիլիթ Մելիքյանի աջակցությամբ երկրորդ համերգով հանդես եկավ համույթը: Առաջին համերգը կայացել էր 2024թ. փետրվարի 29-ին Երևանի «Առնո Բարաջանյան» համերգասրահում: Երկրորդ համերգին «Մենք ենք մեր սարերը» համույթի հետ հանդես եկավ նաև Արսեն Գրիգորյանը՝ Մրոն: Խոսելով գրեթե քառորդ դարի պատմություն ունեցող համույթի մասին՝ Մրոն կարևորեց նրա դերը Հայ մշակույթի կենտրոն Արցախի կյանքում: Տեղեկացրեց, որ համույթը մշտապես մասնակցել է իր նախաձեռնությամբ ամեն տարի անցկացվող «Գութան» փառատոնին: Արցախյան մշակույթի կյանքում առանձնակի նշեց Գուրգեն Գաբրիելյանի դերը, որի միայն «Ղարաբաղի հորովել» երգը, որ միշտ էլ հնչել համույթի համերգներին, առանձնակի տեղ ունի առհասարակ հայ երգարվեստում: Համերգի սկզբում հնչեցին ՀՀ և Արցախի օրհներգերը, եղավ լուսնային թուփ՝ ի հիշատակ Արցախյան բոլոր պատերազմներում և ՀՀ սահմաններում նահատակված քաջորդիների հոգիների:



միայն արցախյան, այլև Մեծ Հայքի գրեթե բոլոր նահանգների ազգագրական, ռազմախայրենասիրական, ժողովրդական, գուսանական երգեր ու պարեր, ելույթներ է ունեցել նաև արտերկրում՝ ՌԴ, Հունաստան, ԱՄՆ, Սիրիա, Լիբանան, Վրաստան, Իրան, Մերձբալթիկա և այլն: Արցախյան 44-օրյա պատերազմը, որ դարձավ Արցախի հայաթափման ու ցեղասպանության սկիզբը, շատ բան փոխեց մեր կյանքում: Այդ պատերազմի ընթացքում համույթի արտիստ-տղաները նաև մարտադաշտում էին: Պատերազմից հետո համախմբվեց «Մենք ենք մեր սարերը», և առաջին ելույթն ունեցան Ստեփանակերտում 2022-ի հունիսի 16-ին: Սակայն դժվար էր շրջափակված Արցախում հանդես գալ համերգներով: Երբեք հայաթափ չեղած մեր հայրենիքի արևելյան հատվածը՝ Արցախը, այսօր գերության մեջ է: 2023թ. սեպտեմբերի վերջին արցախցին մոտ մեկամյա շրջափակումի ժամանակ մնաց մենակ, ենթարկվեց ռազմական հարվածի ու ստիպված թողեց իր տունը: Թշնամու շունչն է

է՝ մի օր տուն է վերադառնալու: Հայաստանի տարբեր մարզերում ու Երևանում բնակություն հաստատեցին նաև համույթի արտիստները: Գեղարվեստական ղեկավար Վ. Ղազարյանը տեղեկացրեց, որ իր և նախկին տնօրեն(2022-ից համույթի տնօրենն է Էլինա Հարությունյան-Ապրեսյանը) Ս. Ապրեսյանի շնորհիվ հնարավոր եղավ համույթի անձնակազմի 30-40 տոկոսը համախմբել: Այժմ Երևանում մեծ դժվարությամբ իր գործունեությունն է փորձում շարունակել ու արցախցիներին համախմբել «Մենք ենք մեր սարերը» համույթը՝ տնօրենի, գեղարվեստական ղեկավարի, ողջ թիմի ու աջակիցների հետ արդեն որպես «Մենք ենք մեր սարերը» մշակութային հասարակական կազմակերպություն(ՀԿ): «Մեր նպատակն է՝ պահել-պահպանել արցախյան մշակույթը և փոխանցել եկող սերունդներին, - ասաց Վ. Ղազարյանը,- և կարևորը՝ չկորցնել տունդարձի հույսն ու հավատը»: Չգտում են հանդես գալ մոր ծրագրերով՝ շուտ ճանաչություն ձեռք բերելու նպատակով: Կա ֆի-


դվար էր լսել Արցախի օրհներգը առանց արցունքի: Համույթը հանդես եկավ արցախյան, ժողովրդական, ազգագրական, ռազմախայրենասիրական, գուսանական երգերով՝ պարային կատարումներին զուգահեռ: Յուրաքանչյուր կատարում ոգևորություն էր առաջացնում դահլիճում, հանդիսատեսներից շատերն արտասվում էին, հուզվում. Հայրենիքի կարոտը խեղդում է: Ռազմախայրենասիրական երգերն ավելի շատ հնչեցին. պետք է ամուր պահենք հայի ոգին, տուն դառնալու հավատը: Դահլիճը ոտքի կանգնած ունկնդրեց արցախցի ճանաչված բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանի «Ղարաբաղցին» երգը: Ընթացքում հաղորդավարները նաև հարցեր ուղղեցին հանդիսատեսին՝ անդրադառնալով Արցախի հարուստ բարբառին: «Ղարաբաղի նախշուն բաջի» երգը բավականին հետաքրքիր ու հաջող ներկայացրեց 9-ամյա Կարինան՝ մեծ ոգևորություն պարզելով ներկայներին: Դահլիճում հիմնականում տեղահանված արցախցիներ էին, որ կարոտի ցավը սրտներում՝ ոգևորված էին կատարված երգ ու պարով: Ու կա հավատ՝ կգա տունդարձի ճանապարհը: Համերգի վերջում հանդիսատեսներն ու համույթի անդամները ողջագուրվում էին, շատերը ծանոթներին, բարեկամ-հարազատներին տեղահանությունից հետո առաջին անգամ էին երևի հանդիպում: Հունամբ՝ «Մենք ենք մեր սարերը» ՀՀ-ն կզտնի իր հաստատուն տեղը Երևանում ու կշարունակի իր գործունեությունը, ինչպես միշտ եղել է: Պարզապես պետք է նաև ժողովուրդն էլ աջակցի՝ ընդամենը տոմս գնի և ներկա լինի համերգներին:

Ջոհրաբ ԸՈՒՅՆՍՆ

ԱՐՑԱՍԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԱՆԴԵՍ

7 ՄՊՍԿ տնօրենը ամեն կերպ ձգտել է պահպանել Արցախում ունեցած իրենց ավանդույթները: Հեշտ ու դյուրին չի եղել իրենց աշխատանքը Հայաստանով մեկ ցրված արցախցի երեխաներին հավաքագրելու գործում: Այսօր նա չի խնայում գույքեր ու զնահատանքի խոսքերը՝ ուղղված Իգիթյան կենտրոնի բարի ու կամեցող մարդկանց հասցեին, որոնք ամեն ինչով աջակցել են, որ այդ երեխաների երազանքը կիսատ չմնա. տեղ են հատկացրել, միջոցներ տրամադրել՝ ստեղծագործական գործունեություն ծավալելու համար: Օրվա ցուցահանդեսը, որ ընդգրկում էր արցախցի երեխաների վառ երևակայությունն ու երազանքները, կարոտն ու ցավը, դրանցից ծնված յուրահատուկ գործերը, լավագույնս բացահայտում է Արցախի տարբեր շրջաններից այստեղ հաճախող երեխաների լուռ մտորումներն ու խոսուն իրականությունը: Ցուցահանդեսը գործելու է մի քանի օր՝ այցելուներին պարզելով արցախյան համուրհուրով գողտրիկ պատկերները, հմուտ ձեռքի աշխատանքները վայելելու գերագույն բերկրանքը: Անցնում են այդ ցուցանմուշների կողքով, ու թվում է՝ դրանք արվեստի նշանավոր ու

հայտնի դեմքերի ստեղծագործ մտքի գեղեցիկ օրինակներ են: Իրա թամբազյանը մանրամասնում է կենտրոնի գործունեությունը. այն ձեռնարկում է տարբեր ծրագրեր, և մեր երեխաները



միշտ սիրով են արձագանքում դրանց: Այդ ծրագիրը գործել է ընդամենը երկու ամիս: 60-ից ավելի երեխաներ են ընդգրկված եղել այդ ծրագրին, և երկու ամսվա ընթացքում ուսու-

ցանվածը այսօր տվել է իր ցանկալի արդյունքը: Շաբաթական երկու-երեք անգամվա պարավունքները գրանցեցին գերազանց արդյունք: Պարզատրվեցին ծրագրին մասնակցած բոլոր երեխաները՝ գոհ ու երջանիկ իրենց աշխատանքներով, նրանց վարպետ-ուսուցիչները: Վերջիններս իրենց երախտագիտական խոսքն ուղղեցին Իգիթյան կենտրոնին՝ իրենց աջակցելու համար և հատուկ շնորհակալություն հայտնեցին կենտրոնի աշխատող Սառային՝ նրան համարելով իրենց պահպանիչ իրենց սրտով: Ի. Թամբազյանի տեղեկություններով՝ իրենք կապ են պահպանում ՀՀ-ի՝ արվեստի հետ առնչվող բոլոր կենտրոնների հետ, որոնք ամեն ինչով նպաստել են բոլոր ցուցահանդեսների կայացմանը: Չորս տարվա մեջ սա 80-րդ ցուցահանդեսն է, որ իրենք կազմակերպում են. հովանավորը Իգիթյան գեղագիտական կենտրոնն է: Ի. Թամբազյանը ցավով է նշում, որ ապագայում դեռ շատ անելիքներ ունեն, սակայն հիմնական տեղ չունեն. 3-րդ անգամ են տեղահանվում (տեղակայված են Ջեթյուն թաղամասում): Շատ ցավալի է, որ այս լուսավոր երեխաների ապագան մշուշոտ է (ո՛վ իմանա, թե

նրանցից քանիսն են աշխարհին հայտնի անուններ դառնալու): Նա սրտի խոր ցավով է իր միտքը շարունակում. «Այս չորս տարիների ընթացքում մշակութային Արցախի մեր ղեկավարությունը բացարձակ անտարբերություն է ցուցաբերել այս երեխաների ճակատագրի ու նրանց գործունեության հանդեպ: Բոլորովին հետաքրքիր չէ, թե ինչով են շնչում ու ապրում այս շնորհալի երեխաները...»: Փորձելով ժամանակից առաջ չընկնել՝ նշեց, որ առաջիկայում ավելի լուրջ անելիքներ ունեն, սակայն վարձակալության համար գումար չունեն, գլխներին տանիք չունեն, որ աշխատեն: Տակավին տեղին է նրա վրդովմունքն առ այն, որ ոչ Արցախի և ոչ ՀՀ իշխանությունները հետաքրքրված չեն այս կենտրոնի աշխատանքներով ու ոչնչով չեն նպաստում նրա գործունեությանը: Անտեր ու անտիրական տեղից տեղ են թափառում ու հանգրվան չեն գտնում: Մնում է հուսալ, որ կգտնվեն բարի ու մեծահոգի մարդիկ, որոնք կընդառաջեն այս երեխաների լուսավոր երազանքներին, որ անկատար չմնան նրանց սուրբ ու նվիրական ձգտումները:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՈՒՍԱՐԱՐ
 Հիմնադիր՝
 ԽՍՐԱԳԻՐ՝
 Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
 «Լուսարար»
 կրթամշակութային ՀԿ

✉ ք.Երևան,
 Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27
 E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է «Լիմուշ» ՄՊԸ տպարանում:
 Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
 Տպաքանակ՝ 500
 Ստորագրված է տպագրության՝ 22.07.2024թ.: